


ՀԵՍՈՅ ՅԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՍԱՀԿԱԿԱՐՔԱԿԱՆ ԲԱՆԱՏՈՒՄ

ԾՐԱԳԻՐ

«ՀՈՒՆԱՍՏԱՆԻ ՏԵՂ ՎՈՅՏԻ ՊԱՏՐԻՋԱՎԱՆ»



ՍԱՀԿԱԿԱՐՔԱԿԱՆ ԲԱՆԱՏՈՒՄԻ ՀՐԱՄԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱՍՏԱՎԱԾ Ե  
ԽՍՀՄ-Ի ԺԿԽ-ԻՆ ԿԻՑ  
ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԳՈՐԾԵՐԻ  
ՀԱՍՏԻՈՒԹԵՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԵՅԻ ԿՈՂՄԻՑ  
1 ՀՈՒՆԻՍԻ 1939 թ.

## ԾՐԱԳԻՐ

### «ԳՈՒՆԱՏԱՆԻ ՑԵՎ ՀՈՌՄԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ»

#### ԲԱԺԻՆ I

Հին Հունատանի պատմություն  
ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

#### 1. Հին Հունատանի պատմագրության գարզացումը

Հասկացողություն անտիկ հասարակության մասին: Նրա տերիտորիալ ու ժամանակավրական սահմանները: Հին Հունատանի պատմության ժամանակադրական շրջանակները: Հին հունական պատմության պերիոդիզացիան: Հետաքրքրության արթնացում գեղի հունական պատմությունը XVIII դարում: Վինկելման, Վոլֆ, Միտֆորդ: Հունական պատմության մշտկումը XIX դարի առաջին կիսում:

Նիբուրն ու նրա քննադատական մեթոդը: Ավգուստ Բյոքը և եպիգրաֆիկայի (արձանագրագիտության) գործարքումը: Պատմագրությունը XIX դարի կեսերին: Դրոյզնն: Կուրցիուս: Ֆյուստել-դե-Կուլանժ: Խմբերիալիզմի դարաշրջանի պատմագրությունը: Ե. Մայեր, Բելլիս, Պելման: Խուսական գիտությունը հին Հունատանի մասին: Վ. Բ. Լատիշով, Ռ. Յա, Վիպովկո, Վ. Պ. Բուղուկով, Մ. Մ. Խոստով, Ս. Ա. Փերելյով: Մարքուզ-լենինիզմի կլասիկները տնօտիկ Հունատանի մասին: Հին Հունատանի պատմության մշտկումը խորհրդային գիտության մեջ:

#### 2. Հին Հունատանի ուսումնափրության աղբյուրները

Աղբյուրների հիմնական անսակները: Պատմագիտության ծագումը հույների մոտ: Լոգոգրաֆներ: Պատմաբաններ՝ Հերո-

դուռաս, Թուկիգիրեն, Քահնոցը ուն, Արխատուել, Պոլիբիոս, Դիոգեն  
ըստ, Գլուտարքոս: Հունական պատմագրության առանձնահատկու-  
թյունների բնութագիրը, հույն աշխարհագրագետները: Դիցա-  
րանությունը վորպես պատմական աղյուր: Դրական աղյուր-  
ների եպսի, լիրիկայի, վողբերգության, կոմեդիայի նշանակու-  
թյունը, հուետորների ճառերը, հույն փիլիսոփաների ու հրապա-  
րակախոսների յերկերը: Եյութական հուշարձանները: Հնագիտա-  
կան կարևորագույն հույնակղուծները XIX—XX դարերում  
Միջներկրական ծովի շրջանում և ԽՍՀՄ-ի հարավում:

Հնագիտության, եպիգրաֆիկայի, դրամագիտության և  
պատմիրողագիայի նշանակությունը հին Հունաստանի ուսումնա-  
սիրության համար: Ետնողբաֆիայի դերը անտիկ աշխարհի ու-  
սումնասիրության գործում:

### 3. Հին Հունաստանի բնույթունը

Հունաստանը Միջներկրական ծովի աշխարհագրական սիստե-  
մի մեջ: Եգիյան ծովի ավազանը: Բարիանյան թնթակղղին և  
արշալետգը վորպես հունական համայնքների պատմական դար-  
գացման կենտրոններ: Հունաստանի աշխարհագրական պայման-  
ները՝ մակերեսի սելցիքը, բնական հորսությունները, գե-  
տերը, կլիման, հողը: Հին Հունաստանի կարևորագույն մարդերը:  
Կղզիները: Քասակարգային հասարակության ծագման ու դար-  
գացման ընդհանուր ընթացքը հին Հունաստանում:

### 4. Հնագույն Հունաստանը

Հունաստանի հնագույն ժամանակների մասին յեղած  
հունական առասպելները: XIX դարի վերջի և XX դարի սկզբի  
հնագիտական պեղությունները: Ելիմանը և Տրոյան: Եվանսը և Կրե-  
տեն: Հնագիտական հուշարձանները կրետեյում, Տրոյայում, Մի-  
կենում և Կորնթոսում: Կրետե-միկենյան հասարակության ժա-  
մանակագրությունն ու պերիոդիկացիան: Սոցիալական կար-  
գերը կրետեյում և Միկենում: Նրա կապերը չեթիթների և Յե-  
գիպտոսի հետ: Կրետե-միկենյան հասարակությունը և գորիա-  
կան գաղթը: Հունական հիմնական ցեղերը: Կղզիների և փոքր-  
ասիստական ափի հնագույն գաղութացումը հույների կողմից:

### 5. Հոմերոսյան Հունաստան

Հոմերոսի պոեմները վորպես ժողովրդական ստեղծագոր-  
ծության արտագրանք: «Իլիականը» և «Վոլփիսականը» վորպես  
պատմական աղբյուր և այսպես կոչված «Հոմերոսի հաբցը»:

Տոհմային կարգերի քայլայվելը հույների մոտ ըստ «Իլիա-  
կանի» և «Վոլփիսականի»: Ենդեւսը հունական տոհմի քայլայ-  
ման մասին: Հոմերոսյան դարաշրջանի հունական հասարակու-  
թյան բնութագիրը՝ եկոնոմիկան, գյուղատնտեսությունը, ար-  
հեսար, առևտուրը, գանակարգային կառուցվածքը, ազնվակա-  
նությունը, ազատ արտագողները և ստրուկները: Պետական  
կազմակերպության սաղմերը՝ ծողովրդական ժողովը, առաջնորդ-  
ները, առաջնորդների խորհուրդը, ցեղական թագավորները (Փի-  
լոբասիլեվոսներ): Հունական կամուգոններան: Դասակարգային ի-  
դեռոգիայի սաղմերը: Դիցարանության գարգացումը և ովհմակա-  
կան պանթեոնը: Դիցարանության հիմնական ցիկլերը:

### 6. Հունաստանը VIII—VII դարերում

Հունական հասարակությունն ըստ Հենիոդոսի: Փոխանա-  
կության գարգացումը, հարսաւության կուտակումը և մասնավոր  
սեփականության սկիզբը: Տօհմային կարգերի հետագա քայլայ-  
յումը՝ ստրկությունը և ազատների գանակարգային շերտավո-  
րումը: Մինչյավագմբ և քաղաքների աճումը: Դասակարգային պայ-  
քարը, արիստոկրատիա, գեմոկրատիա, տիրանիայի (բռնա-  
կալության) գերը: Հույների լայն գաղութացման սկիզբը  
Միջներկրական ծովի ավազանում (Փոքր Ասիայի ափերը, Պրո-  
պոնտիկա, Սև ծով, Հար. Իտալիա, Միջելլիս, Աֆրիկական ծովափ):  
Գաղութացման պրոբլեմը արգի գիտության մեջ: Հույները և  
Ակյութացիները: Հունական գաղութների բնույթը:

VIII—VII դարերի կոլոնիզացիայի ազգեցությունը արտագրո-  
ղական ուժերի զարգացման վրա: Մտրկության զարգացումը:  
Համահունական հոստատությունների սաղմերը, այն և հասարա-  
կական խաղեր, տոնակատարություններ, պատգամախոսներ,  
տաճարներ, կրոնական պաշտամունքներ: Հին Հունաստանի զա-  
նագան մարզերի զարգացման անհավասարաշավությունը:

Դասակարգային պայքարի արտացոլումը թեոդիս Միկա-

բացու և Սոլոնի «Ելեպիանի բում»։ Հունական մատենագրության զարգացումը։ Գիտության և փիլիսոփայության սաղմերը։ VII և VIII դարերի հունական լիրիկան։

#### 7. Սպահառաւա

Պելոպոնեսի մարզերը։ Սպարտան Հակոնիայի կենտրոն։ Սպարտայի նվաճումները Մհամենիսյում։ Լակոնիանի ազգարային կարգերը։ Հապալին սիփականության բնույթը։ Սպարտայի հաստրակության գասակարգային բաժանումը՝ մազարտացյիներ («հավասարներ»), պերիսկներ, հելոտներ։ Հելոպաների գասակարգային պատկանելությունը։ Դաստկարգային պայքարի ձևերը Սպարտայում։ Հելոտների ապահամբությունը։ Կրիպտիաներ։ Սպարտացիների կենցաղն ու դաստիարակությունը։ Պետական կառուցվածքը՝ ժողովրդական ժողով, դերուստ (ծերակույտ), և փորատ, թագավորական իշխանություն։ Սպարտայի քաղաքականությունը Պելոպոնեսում և սահմական գաշնակցության (սիմմախիաներ) կազմվելը։ Սպարտան և սրա դերը հունական մյուս պետությունների ներքին պատմության մեջ։

#### 8. Աստիկան VII և VI դարերում

Տոհմային կարգերի օպյօնացումը։ Աստիկայում։ Տոհմային հողատիրական ազնվականության տիրապետության ռութեղանալը։ Կառավարման կազմակերպումը՝ արքոնտատ, արեպապագոս, ժողովրդական ժողով։ Աթենքի՝ վորպես արհեստագործական-առևտուրական գործունեյության կենտրոնի՝ նշանակության աճումը։ Սարկատիրության զարգացումը։ Դյուզացիության զրության վաստիրացումը։ «Կիլոնի խոսվությունը»։ Դրակոնի գրի առաջ առաջին որենքները։ Սոլոնի որենսգրությունը՝ պարտքային ստրկության և վյուղացիների պարտքային պարտավորությունը։ Սոլոնի սահմանադրությունը։ Դասակարգային պայքարը Սոլոնից հետո։ Պիստորատի տիրանիան։ Հիպատ և Հիպատարքոս։ Կլիսթենեսի որենսությունը։ Տոհմային հարաբերությունների լիկվիդացիան Աստիկայում և ստրկատիրական գեմոկրատիայի տիրապետության սկիզբը։ Աստիկան վորպես հունական «պոլիսի» տիպար։

#### 9. Հույն-պարսկական պատերազմները և Աքենական ծավային դաշնակցությունը

Հույն-պարսկական պատերազմների պատճառները։ Դարեն I-ի սկզբութական արշավանքը։ Փոքր-ասիական հույների ապստամ-բությունը, նրա հետեւվանքները, Պարսիկների առաջին արշա-վանքները Հունաստանի գեմ։ Մարտաթոնի ճակատամարտը։ Կոչ-սակցությունների պայքարն Աթենքում (Արիստիդես և Թեմիս-տոլկես) և ուղմական մեծ նավատորմի ստեղծումը։ Քոերքսեսի արշավանքը։ Պատերազմի զիխավոր ետապները։ Պարսիկների պարտությունը և նրա պատճառները։

Պատերազմների հետեւվանքները՝ փոքր-ասիական քաղաքների ազատագրումը և Աթենական առաջին ծովային դաշնակցության կազմակերպումը։ Ապստամբություն Յեղիպտոսում պարսիկների գեմ և հույների կողմից նրան ցույց տված անհաջող աջակցությունը։

Աթենական ծովային դաշնակցության վերածվելը «Աթե-նական պետության»։ Կիմոնի քաղաքականությունը։ Աթենական պետության կազմակերպությունը։

Հույները Սիցիլիայում։ Սիրակուզայի բարձրացումը։ Ռազ-մական ընդհարումները Կարթագենի և ետրուսկների հետ։ Սիցի-լիայի բռնակալները և սրանց ներքին քաղաքականությունը։

#### 10. Պերիկլեսը և աքենական դեմոկրատիան

Դեմոկրատիայի աճումը Պարսիկների գեմ հույների տա-րած հաղթանակից հետո։ Քաղաքական կուսակցություններն Աթենքում և նրանց սոցիալական բաղան։ Սարկատիրական գեմոկրատիայի հաղթանակը։ Եթիալտեսի և Պերիկլեսի սեփորմ-ները։ Աթենական պետության սահմանադրությունը V դարի կեսերին։

Ժողովրդական ժողով։ Հինգնարյուրի խորհուրդը և նրա գունկցիաները։ Հելիեա։ Սարագենների կոլեգիան։ Արքոնեատները։ Արենպագոսը։ Պերիկլեսը վորպես պետական գործիչ։ Նրա ներքին և արտաքին քաղաքականությունը։ Նրա վերաբերմունքը դեպի դաշնակից քաղաքները։ Աթենքի ծաղկումը Պերիկլեսի

պրով: Աթենքի առևտուրն՝ ու միջնորդային գործարքները՝ Պիրեյ նախահանգնեասը: Ենաւը արությունն Աթենքում: Աթենքը վլողութեա չունասաւնի կուլտուրական կենտրոն: Պերփկեաի խմբուկը: Ոպողիցիայի աճումը:

#### 11. Հունաստանի եկանոնիկան V—IV դարերմւմ

Արտադրության ստրկական յեղանակի զարգացումը վորապես հունական պետությունների տնտեսական դործունեյության հիմք: Հունակերն ու սարուկների թիվը: Ստրկությունը զյուղատնտեսության և արհեստագործության մեջ:

Ստրկական աշխատանքը հանքերում: Ստրկական արդյուն նաբերության տեխնիկան և կաղմակերպչական ձևերը: Ստրուկների իրավական և կենցաղային դրությունը: Աղատ արձակվածները: Մանր արտագրողի գրությունը:

Անտիկ հասարակության հիմնական հակառակությունը և սուլըրումների կասակարգային պայքարի ձևերը: Մարուկների ապստամբությունը Պելոպնիսում, Աստիկայում և Քիոսում: Ստրկատիրական դասակարգի ներսում յեղած հակասությունները: Հունական առետությունը: Դրամական տնտեսության և վաշխառության զարդացումը: Հունաստանի և գաղութային ծայրամասերի փոխադարձ կախումը: Անտիկ տնտեսության նատուրալ բնույթը: Մոդեռնիզացորական հայտնական բնագագառները ուստամագրության մեջ և ցիկլոդի տեսությունն ու նրանց քննադատությունը:

#### 12. Պելոպնիսյան պատերազմը

Պելոպնիսյան պատերազմի ծագման տնտեսական և քաղաքական պատճառները: Պատերազմի առաջին շրջանը: Պերփկեսի անկումը: Կիոնը: Պատերազմական գործողությունների փոխադրությունը: ծովի վրա: Աթենքի քաղաքականությունը «գաշնակիցների» վերաբերմամբ (Միտիլենա, Կերկիրա): Կիեոնի մահը: Նիկետուց և խաղաղության կուսակցությունն Աթենքում: Նիկիասի խաղաղությունը: Ակիբիարէնս: Սիցիլիական արշավանքը: Դեկենեյայի պատերազմը: Ստրուկների փախուստն Աթենքից: Ալիգարխական հնաբերիաներ Աթենքում: 411 թվականի հեղաշրջումը: Դեմոկրատիայի վերականգնումը: Աթենքի վերջին հաջողությունները: Պարսկաստանի միջամտելլ պատերազ-

մին: Աթենքի պարտությունը և «ՅՅ-ի բանակալության» հաստատվելը: Պայքար բոնակարության գեմ և գեմոկրատիայի վերականգնումը 403 թ.:

#### 13. Հունաստանը IV դարի առաջին կիսում

Պատերազմի հետևանքով հակառակությունների սրմելը: Տընտեսական ճղնաժումը Հունաստանում: Մանր արտադրողների պրոլետարիզմացիան և վարձկանության զարգացումը: Անտիկ գեմոկրատիայի կաղմալուծումը: Սպարտայի գերիշխանությունը: Ագեսիլասի արշավանքը Պարսկաստան: Կորնթական պատերազմը: Անտալիկրասի հաշտությունը: Աթենական ծովային յերկրորդ դաշնակցությունը: Ֆերեյի բարձրացումը: ու անկումը (Պելոպիկես և Եղիսական ուշ արքանիան Աթենությունը: Հունական ուշ արքանիան Սպատաքումը: Դիոնիսիոսի Սիցիլիական պետությունը:

#### 14. Հունաստանն ու Մակեդոնիան

Մակեդոնիան, յերկիրը և ցնակչությունը: Մակեդոնիայի համառոտ պատմությունը մինչև Փիլիպպոս II-ը: Փիլիպպոսի ունիորները և պայքարը Հունաստանում գերիշխելու համար: Մակեդոնական և հակամակեդոնական կուսակցությունների պայքարն Աթենքում: Իսոկրատ, Եսքինոս, Փոկրոս, Դիմութենես: «Մըրազան պատերազմը» և Փիլիպպոսի ներթափանցումը Միջին Հցւնաստան: Բերոնիայի ճակատամարտը: Համահելենական կոնդրես Կորնթուսում: Փիլիպպոսի մահը, Սկեքսանորի գտն բարձրանալը և Հունաստանում հակամակեդոնական շարժման ձնշումը:

#### 15. Կլասիկ ժամանակաշրջանի հունական կուլտուրան

Հունական թատրոնը: Վողերքության ու կոմեդիայի ծագումը: Եսքիլես: Սոփոկլես: Թեվլիպիդես: Արիստոֆանի քաղաքական կոմեդիան և Մենանդրի կենցաղային կոմեդիան: Ցարտարապետությունը: Թանգակապործությունը և Նկարչությունը: Գիտության և փիլիսոփայության զարգացումը: Դևմոկրիաի մատերիալիստական փիլիսոփայության Սոփեստները և նրանց հասանակական ուսմունքը: Սոկրատէս: Պլոտոնին ու նրա ուսմունքը: Պլատոնի սոցիալ-քաղաքական ուսումնական Աքիստոտէլ: Նրա փիլիսոփայության հիմունքերը: Աքիստոտէլի քաղաքական

ուսմունքը: Մարգախղմի կլասիկները հունական կուլտուրայի ու փիլիսոփայության մասին:

#### 16. Ալեքսանդր Մակեդոնացու միապետությունը

Արեւլքի նվաճումը հունա-մակեդոնական ուժերի կողմից: Պարսկաստանի ներքին զրությունը: Ալեքսանդրի արշավանքի ուղամատուններն ու շարժիչ ուժերը: Արշավանքի պատմությունը: Հունա-մակեդոնական ոպովոցիան Ալեքսանդրի բանակում: Արշավանք գետի Հնդկաստան և բանակի վիճակը: Ալեքսանդրի ներքին քաղաքականությունը: Ընկեր Ստալինը Ալեքսանդր Մակեդոնացու պետության բնույթի մասին: Ալեքսանդրի մահը: Կուսակցությունների պայքարը Բարեկանում և ստորապությունների առաջին բաշխումը գիտարխների միջև: Դիագոխների ու եղիգոնների պատերազմը: Իպասոսի մոտ տեղի ունեցած կոփը և Ալեքսանդրի միապետության արանումը:

#### 17. Հելլենիստական պետություններ

Պալոմեոսյան Յեղիպտոս: Յեղիպտոսի ազրարային կարգերը: Արդյունաբերությունը: Պետական մենաշնորհները: Յեղիպտոսի արտաքին առևտությը III-Ի դարերում: Ալեքսանդրիայի առևտությունները և արքական նշանակությունը: Պալոմեոսի՝ Յեղիպտոսից դուրս հողեր զավթելու փորձը: Տեղական բնակչության գույնը հույների և մակեդոնացիների գետ: Դասակարգային պայքարը հելլենիստական Յեղիպտոսում և նրա ձևերը:

Սելևիկանների միապետությունը: Այդ միապետության տարրերությունը Պալոմեոյան Յեղիպտոսից: Հունական գաղութացումը: Ազրարային հարաբերություններն Ասիայում: Ներքին և արտաքին առևտությը: Պատերազմներ և Սելևիկանների միապետության թուլացումը: Նոր պետությունների առանձնացումը՝ Հոռոտա, Պերգամ և այլն:

#### 18. Սոցիալական պայքարը Հունաստանում հելլենիզմի դարաշրջանում

Տնտեսական ճպնաժամի խորացումը և գասակարգային հակասությունների սրվելը Բալկանյան թերակղում: Պայքար Հու-

նաստանի համար հելլենիստական միապետությունների միջև: Հունական խոչը պետությունների անկումը III դարում: Աքեյական և Ստոլիցական գաշնակությունները: Ստրուկտում (Դրիմակ): Ազգարային շարժումը Սպարտայում: Ազիսի և Կելոմենի սևիորները: Նաբիսի տիրանիան: Հոռմի միջամտությունը հունա-մակեդոնական գործերին և Մակեդոնիայի ու հունաստանի նվաճումը:

Արեւլտյան Հունաստանը III դարում: Ագաթոկլիսի սցիկլական թագավորությունը: Հունական պղոխների անկումն Բատակացում և Սիցիլիայում և գրանց նվաճումը Հոռմի կողմից:

#### 19. Հելլենիստական կուլտուրան

Հունական կուլտուրայի ազգեցությունը Արեւլքի վրա և Արեւլիքի, ազգեցությունը հունական կուլտուրայի վրա: Գիտության զարգելլը փիլիսոփայություննից: Դրական գիտելիքների աճութը՝ մաթեմատիկայի, ֆիզիկայի, մեխանիկայի, տառապաշխության, աշխարհագրության: Եվվելիկներ, Երաստութենեն, Հիպատարքոս, Հերոն, Տեխնիկայի, մանավանդ ու պազմական ու շինարարական տեխնիկայի աճութը: Բժշկականությունը, բուսաբանությունը: Ալեքսանդրիայի մատնադարանը «Մուսեյոն»: Հելլենիստական լեզվաբանությունը, գեղարվեստական զրականությունը: Հելլենիստական գիլիսոփայության հիմնական ուղղությունները (ստորցիզմ և սպիրիտիզմ): Կրոնական սինկրետիզմ: Հելլենիզմի զարաշւանի պլաստիկ արվեստը:

#### 20. Մերձական հունական քաղաք պետությունները

Սել ծովի հյուսիսային և արևելյան ափերի հունական գաղութացման պատմությունը: Հույներն ու սկյութացիները: Սկյութացիների ազգեցությունը հույն կոլոնիաների վրա: Սըկտութական պետությունների կազմվելը: Նյութական կուլտուրայի հուշարձանները և ԽՍՀՄ-ի հարավում պլազմաների ժամանակի հայտնաբերված արձանագրությունները: Բուֆորի թագավորությունն ու այդ թագավորության համառոտ պատմությունը: Սպարտակիցները և Պերգամանցները: Ստրուկտումը ապրա-տամբություն մեր թվականությունից առաջ II դարի վերջում:

Միհրդատ Պոնտացին և Բոսֆորի թագավորության անկումը:  
Հռոմանցիների արշավանքը դեպի Սևլ ծով և հունական գա-  
զությունների նվաճումը հռոմայիցիների կողմից: Հունական կուլ-  
տուրան և այդ կուլտուրայի ազգեցությունը ԽՍՀՄ-ի տերիտո-  
րիայի ժողովուրդների կուլտուրայի վրա:

## II ԲԱԺԻՆ

### Հին Հռոմի պատմությունը

#### 1. Հռոմի պատմության գարգացումը

Դատմագլությունը՝ գամակարգային պայքարի պատմու-  
թյան հետ կապակցված: Հետաքրքրության արթնացում դեպի ան-  
տիկությունը վերածնության դարաշրջանում: Հռոմեական պատ-  
մագրությունը լուսավորության գարագրջանում (Մոնտեսկյո, Գիբ-  
րոն, Բրֆոր): Հին Հռոմի վերաբերյալ գիտության զարգացումը  
XIX դարում (Նիբուր, Հեղել, Մոմեն, Ֆյուստել-Վլանժ): Իմպերիալիզմի դարաշրջանի պատմագրությունը (Կ. Բյուխեր,  
Ե. Մայեր, Պյոլման, Սալվիոլի, Ֆնրերո, Մ. Վեբեր և այլն): Հին Հռոմի զարգացման և անկան վերաբերյալ նրանց պատ-  
մական կոնցեպցիաները: Հռոմեական պատմագրության զար-  
գացումը Ռուսաստանում: Հռոմի վերաբերյալ Ռուսերեն լեզվով  
աշխատությունները: Հին Հռոմի պատմության մարքսիստական  
մշակումը:

#### 2. Հին Հռոմի ռասումնասիրության աղբյուրները

Հռոմի պատմության աղբյուրների անսակները: Գրավոր  
տղբյուրները: Նյութական հուշարձանները, համեմատական-  
ազգագրական և լեզվաբանական տվյալները: Պատմության ծա-  
գումը հռոմեացիների մոտ: Տարեգրությունները: Հռոմեական  
տարեգրիները: Հռոմեական պատմագրության ընդհանուր տե-  
սությունը: Ֆարփոս Պիկտորը, Պոլիբիոսը, Դիոկորը, Սալյուս-  
տիոսը, Ցիցերոնի պատմական տվյալները, Լիոնիոսը, Դիոնի-  
սիոսը:

Պուտարքոսն ու նրա գըած հռոմեական գործիչների կեն-  
սագրությունները: Ապահանը, Տակիասոսը, Սվետոնիոսը, Դիոն  
Կասիոսը:

Ուշ հռոմեական պատմաբանները՝ Ամմեն Մարկուլինոսը,  
Որոսիոս, Պրոկոպիոս, Յեփսերիոս: Գրական և իրավաբանական  
հուշարձանները:

Հնագիտության, եպիգրաֆիկայի, դրամագիտության և պա-  
պիրոլոգիայի տվյալները:

#### 3. Իտալիայի յերկիրն ու բնակչությունը

Իտալիան Միհրեկրական ծովի աշխարհագրական սիստե-  
մություն է: Հողն ու կլիման: Ծովն ու կղզիները: Առավինյա գծի ըր-  
ունույթն ու նրա տարրերությունը Հռոմատանի տառավինյա գծից:  
Իտալիայի հիմնական ռայոնները: Բնակչության պրոբլեմը:  
Իտալիայի ետնիկական կազմի խայտարղեառությունը: Հռոմեական  
գաղութացումը: Ետրուսկների պրոբլեմը: Ն. Յ. Մասի թեո-  
րիան տվյալ հարցի առթիվ: Լատինները ու իտալիկները:

#### 4. Հռոմեական պատմության վաղ շրջանը: Պատրիկիների ու պլեբեյների պայքարը

Հռոմեական պատմական տրամփիցիայի բնույթը: Հռոմեա-  
կան համայնքի ձեփավորումը: Խորուսկական ժամանակաշրջանը  
Իտալիայի պատմության մեջ: Թագավորական ժամանակաշրջանը:  
Սոցիալական կարգերը՝ պատրիկներն ու պլեբեյները, պատրոն-  
ներն ու կլինտները, սորունկները: Սերվիսոս Տուլիոսի այսպիս  
կոչված սեփորմի հարցը: Պատրիկների ու պլեբեյների միջև հա-  
կառությունների սրվելը: Պարտքային իրավունքը և հողի հա-  
մար մզգող պայքարը: Պլեբեյների շերտավորումը: Տրիբունատի  
սահմանումը: XII տախտակների որենսդրությունը: Պլեբեյների  
կողմից քաղաքական իրավունքներ նվաճելը (Նախքան Հորտեն-  
ցիոսի 287 թ. որենքը): Նորիլիական կազմագորումը:

#### 5. Վաղ-հռոմեական հանրապետությունն ու նրա ընդլայնումը:

Հռոմեական հանրապետության սահմանադրությունը:  
Սովորական և արտակարգ մագիստրատները: Սենատը: Կո-  
միցիաները: Իտալիայի նվաճումը: Պատերազմներ ետրուսկ-  
ների դեմ: Գալլերի արշավանքը: Լացիոնի նպատակեցումը:  
Սամնիական պատերազմները: Պայքար հարավային իտալիայի  
համար: Պատերազմներ Պիրասի վեմ: Հռոմեական բանակն ու

Նրա կանուցվածքը իտալիայի կազմակերպումը Հոռմի տիրաւ պետության տակ: Գաղութները, մունիցիպալումները, քվեարկման իրավունքից դուրկ համայնքները, լատինական գաղութները, դաշնակիցները:

#### 6. Պունիկյան առաջին և յերկրորդ պատերազմները:

Կարթագենը: Նրա տնտեսական և հասարակական-քաղաքական կարգերը: Գաղութները: Կուլտուրայի բնույթը: Հոռմի կարթագենի հետ ընդհարվելու պատճառները: Պայքար Սիցիլիայի համար: Պունիկական առաջին պատերազմը: Հոռմ մերկան ուղղական նավատորմի ստեղծումը: Խեղուղուի աֆրիկական արշավանքը: Հոռմի հաղթանակը և 241 թ. հաշտությունը: Վարձկանների ապստամբությունը կարթագենում: Բարեկյաններն իսպանիայում: Հոռմի քաղաքականությունը Հյուսիսային Իտալիայում:

Հաննիբալի քողաքականությունն Իսպանիայում և նախապատրաստությունը Հոռմի գեմ պայքարելու համար: Պունիկական յերկրորդ պատերազմը: Հաննիբալի արշավանքը: Ճակատամարտներ Տիբրիոյի և Տրեբիայի մոտ: Պալլիրի ապստամբությունը: Դասկատամարտ Տրավիմենյան լճի մոտ: Ֆարինո Մաքսիմոսը: Նրա աւակտիկան և գյուղացիության դժուհությունը: Պատերազմի հետագա ընթացքն Իտալիայում: Պայքար Սիցիլիային ու Իսպանիային ափրելու համար (Սցիպիոնները): Հասդրուրալի արշավանքը: Սցիպիոնի ափրիկական արշավանքը և Զամայի ճակատամարտը: Հաշտության պայմանները:

#### 7. Հոռմի ներքափանցումն Արեվիլ: Պարսկական յերրորդ պատերազմը

Դրությունն Արենելքում: Հոռմի քաղաքականությունն Արելքում: Մակեդոնական յերկրորդ պատերազմը: Հոռմի միջամբ տությունը Հունաստանի ներքին գործերին: Պատերազմ Անտիոքի գեմ: Պատերազմ Աերսեսի գեմ: Մակեդոնիան վրայես հառմերկան պրօվինցիա: Ապստամբություն Հունաստանում: Կորնթոսի կողապտումը: Պունիկայն յերկրորդ պատերազմը և Կարթագենի անկումը: Հոռմիական պետության ուղղիսությանը:

#### 8. Իտալիայի եկոնոմիկան II և I դարերում մեր թվականությունից առաջ

Նվաճումների ազգեցությունը: Պրովինցիալ կառավարման սիստեմը: Պրովինցիաների կողապտումը և արժեքների ներճառումը գետի Իտալիա: Հոռմեական վաշխառուները և կապիտալի համակենտրոնացումը (պուբլիկաններ): Փոփոխություններ Իտալիայի գյուղանախության մեջ: Գյուղացիության քայլքայլելը: Հողային խոշոր տնտեսության զարգացումը: Ստրկատիրության աճումը: Հոռմեական ստրկության բնույթն, ի տարբերություն հունական ստրկությունից: Ստրուկների իրավական և կենցաղային դրությունը: Ստրկատիրության ազգեցությունը գյուղացիական տըսության վրա: Ազատ արձակվածները և նրանց գերը Հոռմի տնտեսության մեջ:

#### 9. Ստրուկների ենդափոխության սկիզբը և Գրակեռների շարժումը

Ստրուկների շարժման սկիզբը: Պայքարի առաջին ձեերը: Ստրուկների մաս յերայթները: Մասսայական առաջին ապստամբությունը Սիցիլիայում, այդ ապստամբության ընթացքն ու զարգացումը: Սիցիլիական հեղափոխության արձագանքները հոռմեական պետության տարբեր վայրերում:

Արիստոնիկոսի ապստամբությունը Պերգամում: Գրակեռների շարժումը: Տիբերիոսն ու նրա ագրարային որինագիծը: Ֆուլվիոս Ֆլակիոսը, Կայսր Գրակեռնը և սրա ոհիորմները: Հոռմեական գետուկրատիայի պառակտումը: Գրակեռների շարժման պատմական նշանակությունը: Ազրարային որինովրությունը Գրակեռներից հետո: Հեղափոխության տվյալ Փազի սոցիալական նշանակությունը հոռմեական պատմության համար:

#### 10. Դասակարգային պայքարը II և I դարերի սահմանագում. Սուլլայի ռեակցիան

Յուգուրթյան պատերազմը: Մարիոսի սավմական ռեֆորմը և այդ ռեֆորմի պատմական նշանակությունը: Պայքար կիմբրերի և տեսոնների գեմ: Ստրուկների յերկրորդ ապստամբությունը Սիցիլիայում և այդ ապստամբության արձագանքներն ըլլայական պատմության համար:

Հրամելում: Դիմոկրատիական շարժումը Հռոմում: Ապուլիյ Մասուուրնինը: Կովիոս Դրուգ Կըտուերը: Դաշնակցային պատերազմը վորպես Խտալական գյուղացիության յելույթ: Պատերազմ Միհրդատի դեմ: Պայքար Մարիսի ու Սուլայի միջև: Սուլայի տառաջին սեակցիան: Մարիսի հեղաշրջումը Հռոմում և քաղաքացիական պատերազմը Իտալիայում:

Սուլայի գիկուտուրան վորպես ստրկատերի իշխանության համակենտրոնացում ընդդեմ հեղտուիսության:

#### 11. Սպարտակյան հեղափոխությունը և հանրապետության ճգնաժամը:

Սոցիալական պայքարի սրվելը: Ստրկատիրական դիմոկրատիայի ճգնաժամը: Յելույթներ նրա գեմ: Գլավիատորների ապրատամբություն Սպարտակի վիխավորությամբ: Ապստամբության ընթացքը: Տարածայնություններ ապստամբների միջև: Կրապտուը և Պոմպեուը: Սպարտակի մահը և սպարտականների հետագա պայքարի հտակիայի հարավում: Պայքար իշխանության համար Հռոմում: Մինչսուլայան սահմանադրության վերականգնումը: Պայքար ծովանենների դեմ: Պոմպեոն Արևելքում: Աստղին դավարությունը հանդապետության դեմ (65 թ.): Սերվիլլուս Ռուբոսի ազրարային որինագիծը: Կատիլինան և սրա յելույթը հանրապետության դեմ: Կատիլինայի դավագրությունը և Ցիցերոնը: Կատիլինայի հետորդների շարժման բնույթը: Կեսարի հանգես վալը և նրա քաղաքականությունը: 60-ական թվականներին:

#### 12. Հռոմեական հանրապետության վախճանը: Պայքար հանուն ուսկմական դիկուտուրայի:

Առաջին արիումիրատը (յեսապետությունը): Գալլիայի նվաճումը Կեսարի կողմից: Կըտուն Արևելքում: Առաջին արիումիրատի կաղմածածումը: Պայքար Կեսարի ու Պոմպեոսի միջև: Կեսարի գիկուտուրան: Նրա ուժիորմերը: Կեսարի մահը: Պայքար իշխանության համար նրա մահից հետո Մուտինայի կրկիլը:

Յերկրորդ արիումիրատ: Պրոուկրիպտիաները: Ֆիլիպպիի ճակատամարտը: Իշխանության բաժանումը: Ազրարային հարցն

Իտալիայում: Պերուսիական պատերազմը: Պայքար Սեքսան Պոմպեոսի դեմ: Անտոնիոսի քաղաքականությունն Արևելքում: Պայքար Ուլտավիանոսի և Անտոնիոսի միջև: Ակցիումի ճակատամարտը: Յեղիպտոսի միացումը: Հռոմեական հանրապետության անկման և ուղղմական դիկտատուրայի հաստատման սոցիալական պատճառները:

#### 13. Հռոմեական կուլտուրան հանրապետության դարաշրջանում

Ետրուսկական և վայ հունական աղքացությունները: Հռոմեական հնագույն կրոն և նրա հելենականացումը: Հռոմեական գրականության ծագումը (Յենիոս, Անդրոնիկը, Նեվիոս): Հռոմեական կոմեգիան և նրա ներկայացուցիչները (Պլովտոս, Տերենտիոս): Հռոմեական տարիգրությունն ու պատմությունը (Ֆարիոս Դիկտոր, Պոլիբոս, Սալլյուստոս, Կեսար):

Ճարտարանությունն ու քաղաքական հրապարակախոսությունը (Ցիցերոն):

Հռոմեական կենցաղի հելլենականացումը: Սցիպիոնի խըմբակը: Հանրապետության անկման ժամանակաշրջանի Հռոմեական գոտզափարախոսությունը: Հռոմեական փիլիսոփայությունն ու այդ փիլիսոփայության ներկայացուցիչները (Լուկրեցիոս Կար):

#### 14. Հռոմեական կայսրությունը I դարում ու սոցիալական պայքարը պերֆիլիաներում

Հռոմեական կոյսրությունը վորպես ստրկատերի սաղմական դիկուտուրան: Պրինցիպատը վորպես նրա սովորվածիկ ձև: Ոգոսուուլ: Նրա Փինանսական, սոցիալական, վարչական և ռազմական քաղաքականությունը: Հռոմեական կոլոնուրան Ոգոսուուլ ժամանակի: Պրականությունը (Վերգիլիոս, Հորացիոս, Ովիդիոս): Հռոմեական պատմագիտությունը (Տիտ Լիվիոս, Դիոսկոր Սիցիլիացին, Դիոնիսիոս Համբարձուցին): Կառուցողական արվեստ (Վիտրույվիոս):

Տիբերիոս, Կայուրուլա, Կլավիլիոս: Մորուկների հուզումները: Հանրապետական սոցիլիցիան և պատուր սենատի արխուուրատիույթի դեմ: Պրետորիականներ և ռազմական բյուրոկրատիումը: Ազատ արձակածները, նույն համակութանունները: Ծրագիր Հռոմ, և Հռոմի պատմ.—2

Հեղափոխական և սպազիցիան արամազըրթյանների աճումը՝ ձրեական պատերազմի սկիզբը: Ապատամբություններ պրովինցիաներում: 68-69 թվականների քաղաքացիական կոփլը: Հայք կերի աճումը: Ֆլավիոսները: Հրեաստանի ապստամբության ճնշումը: Յիվիլիսի ապստամբությունը: Դոմիդիանոսը և նրա ճգումը արսութափը հաստատելու: Պայքար սենատի դեմ:

### 15. Հռոմեական կայսրությունը Ա դարում

Տրայանոսը: Իսարական հազարիրության ամբապնդելու փոքրէր: Կեական բարեգործության աճումը: Տրայանոսի արտաքին քաղաքականությունը: Կայսրության ընդլայնման բարձըրդույն կետը: Բյուզանդատոցումը Ավրիանոսի ժամանակ: Բարչկողուայի ապստամբությունը Հրեաստանում: Անտոնին Գիոս և Մարկոս Ավրելիոս: Կայսրության արտաքին և ներքին դրության վատաթարացումը Մարկոս Ավրելիոսի սրբք: Ապատամբություններ պրովինցիաներում: Ճնշում կայսրության սահմանների վրա: Կոմոդը և նրա արտաքին քաղաքականությունը: Աբանդուտիական անզենցների ուժեկացումը: Անտոնինների դինաստիայի վերջը:

Հասմեական պրովինցիաները Ա դարում: Արևելյան պրովինցիաները: Առևարի գարգացումը: Արտաքին առևտուրը (Զիւնաստանի ու Հնդկաստանի հետ): Արևմտյան պրովինցիաները: Բաղաքների աճումը: Քաղաքային վարչություն՝ դեկորիոնները և քաղաքային մազիսարատները Կառավարական հակողությունը քաղաքային ֆինանսների վրա: Մայրամասային և քաղաքային շարժումները: Խոշոր ու մասն հոգատիրությունը Անտոնինների գործադրանում: Կոլոնատի ծագումն ու նրա զարգացումը: Կոլոնաները մասնավոր և կայսերական կարգածներում: Գերմանացիւների բնակեցումը Կայսրության ծայրամասերում:

Հասմեական կուլտուրան I և II դարերում: Աստիկան փիլոսոփայության հաջորդթյունները (Սենեկա, Մատեոս Ավելիոս): Պատմազրության բնույթը (Տակիտոս, Սվետոնիոս): Գեղարվեստական արձակը (Պետրոնիոսի «Սատիրիկոնը», Լուկիանոսը, Ապուլիոսը): Յերգիծաբանություն (Յուվենալ): Ճարտարապետություն Աղբիանոսի սրբք: Գիտության բնույթն այդ եպոփեաւմ (Կոլումբան, Պինիոս Մատուրը):

### 16. III դարի նգնածամբ

Քաղաքացիական պատերազմն ու Սելիբրների զինաստիան: Իշխանության առարտի ուղղմականացումն ու բյուրոքրատացումը: Խոշոր հոգություն աճումը: Կոլոնատի զարդացումը: Հարգերի լուծը: Շողագրագույն մասնաների աղքատացումը: Արևմտապարծություն, առևտուրի անկումը, փինանսական ճգնաժամը: Սենատի իշխանության թուրացումը: Կարակուլը եղիկուլը 212 թ.: Մենաստական ուսուցիչան Արքանուդը Սելիբրի ժամանակ և սրբ անկումը:

III դարի զինվորական կայսրները: Մաքումինոսը: Քայուքի ստորին խավերի և զյուզական ընտակության գծգոհությունը: Գորդիանների շարժումը (238 թ.): «Մենաստարական» կայսրները: Բարբարաների ներխուժումը՝ պարսիկներ, գոթներ, ավեմաններ: Կենտրոնական իշխանության անկումը: Կայսրության անբիուայում բնույնուրույն պահանջաների ետղմիկլը: Գյուղացիների, սարուկների և քաղաքային արհեստավորների շարժումը: Պրամահատների ապստամբությունը Հոմում, բազառությունը շարժման սկիզբը: Վերահան հեղափոխությունը ճնշելու և կայսրությունը վերականգնելու փորձեր Ավրելիոսի և Պրոբոսի ժամանակ:

### 17. Քրիստոնեաւթյուն ու նրա ծագումը

Քրիստոնեյության ծագման պրոցեսը: Քրիստոնեյական վաղ համայնքների սոցիալական կազմը: I դարի քրիստոնեյության վերաբերող բոլոր աղջյուրների լիգենդար կամ կեղծ բընույթը: Քրիստոնեյությունը վորպիս սինկրետիկ կրոն: Հրեականությունը, արևելյան կրոնները, ժողովրդական հավատավիճակները, վիւճառությունը (ստորիգիզմ և նեոպլատոնիզմ), վորպիս քրիստոնեյության բաղկացուցիչ տարրերը: II դարի համայնքների տարածման սայնները: Յեպիսկոպոսությունների գերը նրանց կաղմակերպման գործում: Յեկեղեցական վերնախավի և ստուրին խավերի միջև յեղած պայքարի սկիզբը (հերձվածներ): Յեկեղեցու աղյօքարը կառավարության գեմ և այսպիս կոչված հաւածանքները:

## 18. Հոգմական նիշ կայսրությունը

Դիոկղետիանոսը և հեղտփոխության ժամանակավոր ճնշումը: Պառության նոր ձևը (զոմինատ): Կայսրության բաժանումը: Դիոկղետիանոսի ուժորմները՝ եղիկո զննորի մասին, ֆինանսական ունչորմը, հարզային ունչորմը: Իյուլոկրատիայի գերը Ուշ կայսրության դարաշրջանում: Դիոկղետիանոսի կրոնական քաղաքականությունը: Հոգմեական ստեմաների ամրացումը: Հոգմեական բանակի բարբարուցումը: Պայքար իշխանության համար Դիոկղետիանոսի հաջորդների միջև կոստանդինը: Նրա դաշնութը քրիստոնեական յիկեղեցու հետ: Միլանի եղիկար: Դոմինատի սիստեմի ձևավորման տվյալումը: Մայքաքաղաքի տեղափոխումը գեղի Արևելք: Հերձվածների զարգացումը վորպես հեղափոխական շարժման ժամանակ: Ագոնիատիկների (ցիրկումցիլոնների) շարժման ոկիպը: Արիոսականությունը: Նիկոս վեհաժողովը: Հեթանոսության վերականգնման վորձ Հուլիանոսի որոք: Քրիստոնեյության վերջնական հաղթանակը նրա հաջորդների որոք: Հեթանոսական պաշտամունքների արդելումը: Յեկեղեցին վորպես պետական ապարատի մաս:

## 19. Եկեղեցիկան և սոցիալական եպարքությունները նիշ կայսրության եպիսայում

Սորկատիբական լատիֆունդիայի կործանումը և նոր ձեկի խոշոր կալվածի տուաշացումը: Կրոնատի հետազա զարգացումը: Կոլոնների ճորտացումը: Պատության միջամտությունը աղնատեական կյանքին: Հարկադիր մատակարարումների սիստեմը: Կոմմոնիաների ճորտայումը: Հարկադիր աշխատանքի վրա հիմնված պետական խոշոր արհետանոցների կազմումը: Կուրքիաների ճորտացումը: Դրամի արժեքագրիումը: Առևտի անկումը: Հարկելի նատուրալական արհետանոցների վարպետումը: Դոմինատը վորպես կայսերական իշխանության կենտրոնացման նոր ձե:

## 20. Սորուկների և կորնեների նեղափոխությունն ու բարբարութերի հարձակումը: Կայսրության անկումը

Գոթերն ու հոները: Վեստգոթիկի բնակեցումը Բալկանյան թերակղզում: Վեստգոթիկի ապատամբությունը, Բալկանյան թե-

րակղզու ավելումը և Վալենտի մահը: Ապատամբություններ Հըստմեական կայսրության զանազան վայրերում: Բագառուների ապատամբությունը Գալլիոյում և Խոպանիայում և ապրնիստիկներինը՝ Հըստմեական Աֆրիկայում: Թեոդոսը և կայսրության վերջին միավորումը: Կայսրության վերջնականապես Արևելյան ու Արևմտյան մասների բաժանվելը Թեոդոսի մահից հետո: Արկադիանը և Հոնորիանը: Վեստգոթիկի նոր ապատամբությունն Աշլարիի ղեկավարությամբ: Վեստգոթիկի և սորուկների միավորվելը Հոգմեական կայսրության դեմ: Հոոմի գրավումը Ալարիի կողմից: Հոների արշավանքը: Ատաթիա: Հոոմի կողովառումը վանդակների կողմից: Արևմտյան կայսրություն տերիտորիայում բարբարուական պետությունների կազմվելը: Հոոմեական վերջին կայսր Հոոմուլոս Ավգուստուլոսը: Արևմտյան Հոոմեական կայսրության անկումը: Սկյութացիների, ավարների և սրավոնների ներխուժումը Արևելյան Հոոմեական կայսրության մեջ: Արևելյան Հոոմեական կայսրության ներքին ու արտաքին գլուխունը: Յուստինիանոսի ու նրա քաղաքականությունը:

**Գրականություն առաջին հատվածի վերաբերյալ՝ Հին  
Հունաստանի պատմության**

## Հիմնական գրականություն

Համկ (թ)կ պատմության համառոտ դասընթացը:  
Ենգելս—Բնաւանիքի, մասնավոր սեփականության և պետական ծագության:

S. VI:

Сергеев—История древней Греции—Соцэкиз 1939 г.  
Струве—Хрестоматия по древней истории, т. I, 1936 г.

История древнего мира, изд. ГАИМК, том II, Древ-

ния Греция, гл. V—VII.

## Լրացուցիչ գրականություն

История древнего мира, изд. ГАИМК. т. II, ч I и II,  
«Греция» (целиком).

Виппер—История Греции в классическую эпоху.

Пельман—Очерки греческой истории и источниковедения.

Белок—История Греции, ч. I и II.

Յերկրորդ բաժնի վերաբերյալ՝ Հին Հռոմի պատմության

Համկ(ը) կ պատմության համառոտ դասընթացը:  
Ենգելս—Ենտանիքի, մասնավոր սեփականության և պետության ծագումը:

Լենին—Պետության մասին, դասախոսություն, Ընտիր յերկ.

6. VI

Ստալին—ձառ արտասահմած հարվածային կոլտնտեսական ների Համամիութենական I համագումարում:

Ստալին—Քաղաքական հաշվետվություններ Համեր(բ)կ 17  
և 18-րդ համագումարներին:

Мишулин—Спартаковское восстание, 1936.

Միշուլին—Սպարտակի ապստամբությունը և Հռոմեական  
ապեսության անկումը, 1936 թ.:


Сергеев—Статья в журнале «Вестник древней истории» за 1938 г.

Машкин—История древнего Рима (краткое пособие к университетскому курсу).

## Виппер—Очерки по истории Римской империи.

## Нетушил—Обзор Римской истории.

Թուսերեն քնազիրը խմբագրել է Վ. ՍերգեՅԵՎԸ




ՀՀ Ազգային գրադարան



NI 0937754

28318



## Թարգ. Մ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Թարգ. Խմբ. Հ. ԽՈԽԵՈՅԱՆ

Տեղ. Խմբ. Ա. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

## Սլքաղիչ կ. ՊետրոսՅան

Գլավիթի լիտորը՝ № Ն. 2892, Պատվեր 352, տիբաժ 1000

Հանձնված և պատվրության 22 սեպտեմբերի 1939 թ.

Ստորագրված և տպագրության 9 հոկտեմբերի 1939 թ

Թերլիքը՝ 60×43, ապագը՝ մամուլ 1,5, մեկ մամուլում՝ 36. 480 նիշ

Մանկավարժական ինստիտուտի տպարան, Մարգարի փ. № 17, Յերևան 1939 թ.